ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

ՔԱՎՈՐԸ ՊՈՆՏՈՍԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՅՆԵՐԻ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳՈՒՄ (XIX – XXդդ.)

Ինչպես հայերի, այնպես էլ Պոնտոսի հույների ընտանեկան կյանքում քավորը մեծ տեղ է գբաղեցնում: Նրա մշտական ներկայությունը տվյալ ընտանիքի կյանքում սկսվում է սերնդագործության հիմք հանդիսացող ամուսնության և հարսանեկան ու մանկածնության ծիսական համալիրներին ակտիվ մասնակցությամբ ստանձնած որոշակի պարտականությունների իրականացմամբ:

Քանի որ և հայկական, և հունական հարսանիքներում քավորը ողջ այդ հարսանեկան ծիսաշարի ընթացքում գտնվում է գործունեության լայն դաշտում և բազում գործառույթներով է հանդես գալիս, ապա դրանք մեկ հաղորդման սահմաններում ներկայացնելու և համեմատական համալիր վերլուծություն կատարելու հնարավորություն մեզ չի ընձեռվում: Ուստի, սույն հաղորդման մեջ համեստ փորձ է արվում ուշադրություն հրավիրելու հունական հարսանիքում առկա քավորի գործառույթներից երկուսի տոհմական քավոր հասկացության և քավորի պատասխան երևույթի վրա, պարզաբանել, թե որքան է ժամանակը և այլ թնիկ միջավայրն ազդել դրանց պահպանման կամ այլակերպման վրա: Այդ նպատակով օգտագործել ենք ինչպես մասնագիտական գրականության տվյալները, այնպես էլ Հայաստանում բնակվող և Հունաստանում (Ալեքսանդրուպոլիս, Դիդիմոտիխո, Օրեստիադա, Թեսալոնիկի և այլն) վերահաստատված պոնտական հույների միջավայրում մեր կողմից գրառված դաշտային ազգագրական նյութերը:

Քավոր և քավորակին բառերն ինչպես հույների հետ խառը բնակվող հայաշատ վայրերում[1], այնպես էլ հույների մեջ ունեն մի քանի համարժեքներ *կումբարոս - կոմբարցա* (κουμβάρος - κουμβάρτσα), *դեքսամենոս - դեքսամենցա*[2] (δεξαμένος - δεξαμέντσα), *նունոս - նունա*[3] (νουνός - νουνα) և *օփսիկ*[4] (οψίκ), որոնցից յուրաքանչյուրը գործածվում է կոնկրետ գործողության ժամանակ: Այս երեք բառերից ամենատարածվածը *կումբարոսն* է: *Օփսիկ* անվանու-

[1] Պոնտոսի հայերը քավորին ասում են գընկապրխ, տրապիզոնցիները գընկահար, քավորկնոջը գնկագին, Գամիրքի հայերը ընքապպ - И. В. Кузнецов. Одежда армян Понта. Москва, 1995. стр. 115. Վ. Ս. Թեմուրյան. Գամիրքի հայերը, Եր., 1970, էջ 119:

[2] Αρχείο των Ποντιακών και Μικρασιατικών Πολιτισμών, Ιωάννινα, 2001, էջ 64:

[3] Γεωργιάδης Θανάσης, Ο Πόντος, τόμος 2, Θεσσαλονίκη, 1994, էջ 562:

[4] Αρχείον Ποντού, τόμος 384 Αθήνα, 1984, էջ 211:

մը քավորին տրվում է հարսի հոր տուն առաջնորդվող հարսնառի խմբի պր-րիայի, կողմից: Այս բառը բարբառային է և ունի երկու բացատրություն: Առաջին դեպքում օփս-ն նշանակում է դանդաղ: Այսինքն քավորի կողմից ղեկավարվող հարսանեկան շքախումբը խրախճանալով հանդարտ մոտենում է իրենց պատ-վին բացված առատ ուտեստներով սեղաններին, արարողություն, որն ուղեկց-վում էր ծոխ և պարտադիր հյուրասիրությամբ, բարեմաղթանքներով, երգով ու նվագով, աղմուկ աղաղակով: Հարսնառի խմբի ճիշտ այսպիսի ընթացքի հան-դիպում ենք նաև հայկական ավանդական հարսանիքի վերաբերյալ ազգագրա-կան գրականության մեջ[5]: Օփսիկի երկրորդ իմաստը բառացի նշանակում է տեսնել: Այս պարագայում, տեսնելը պետք է հասկանալ քավորի հսկողական դերակատարումը հարսանեկան ողջ արարողակարգի ընթացքում: Դա նշանա-կում է, որ քավորը հսկում ու պաշտպանում էր փեսացուին կարծեցյալ թշնամի-ներից, չարակամորեն տրամադրված մարդկանցից: Այս իմաստի մեջ է մտնում նաև հարսանեկան արարողությունից հետո առագաստի գիշերը փեսացուի քավորի տանը գտնվելը և նրա հետ քնելը: Այս գործողությունը միտված էր փեսացուի անվտանգությունն ապահովելուն (սեռական ընդունակությունները կապ գցելուց զերծ պահելուն) և քավորի խրատական փորձառությունը հաղոր-դելուն[6,7]: Ինչ վերաբերում է հարսնացուին, ապա նա փեսացուի տանն այդ օրը համարվում էր «հյուրընկալված» (*Ֆիլոքսենումենի*) և մինչ առագաստը գիշե-րում էր հարսնաքրոջ կամ քավորակնոջ, կամ էլ փեսայի քրոջ տալի, որևէ այլ մերձավոր ազգականուհու հետ: Այդ միջոցին փորձառու կինը նորահարսին նախապատրաստում էր առագաստին, նաև հետառագաստին փեսայի մերձա-վորների նկատմամբ ամոթխած պահվածք դրսևորելուն:

Ուշագրավ է ևս մեկ սովորույթ, որը բնորոշ է Պոնտոսի հույների հարսա-նեկան ծիսական համալիրին: Հարսանեկան խրախճանքի ավարտից հետո, երբ նորապսակները պատրաստվում էին իրենց հատկացված առագաստի հարկա-բաժին գնալ, քավորը քաղցրավենիքի և դյուրամարս ուտեստի (տոլմա) պարու-նակությամբ մատուցարանով ներս էր մտնում և հյուրասիրում նրանց[8]: Հայաս-տանի հունաբնակ գյուղերում կատարած մեր ուսումնասիրությունների ժամա-նակ նման սովորույթի առկայություն չարձանագրվեց: Այսօր, ուշագրավն այն է,

---

[5] Ռ. Նահապետյան, Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Երևան, 2009, էջ 117, Արշակ Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Կահիրե, 1952, էջ 1508:

[6] Α.Ν. Καπνορίδου. Τα έθιμα του γάμου στην Νικόπολη του Πόντου, Αθήνα, 1983, էջ 225:

[7] Գանձակում և Թուրքիայի որոշ գավառներում հարսանիքի առաջին գիշերը փեսայի քավորի հետ քնելու մասին է վկայում նաև Գ. Իփեկյանը: - Ազգագրական հանդես, 24-րդ գիրք, Թիֆլիս, 1913, էջ 103:

[8] Ξενοφώντα Κ. Ακογλου. Από τη ζωή του Πόντου. Αθήνα, 1939, էջ 215:

որ ապրելով հայկական միջավայրում, հունական ընտանիքներում չեն պահպանվում առագաստից հետո «կարմիր խնձոր» ուղարկելու և դրանում քավորի կնոջ ակտիվ դերակատարում ունենալու սովորությը, ինչպես որ բնորոշ է հայոց ավանդութային համալիրին:

Այժմ հակիրճ անդրադառնանք վերոնշյալ երկու երևույթների մեկնաբանմանը: Դրանցից մեկը տոհմական քավորի դերակատարման հարցն է: Քավորը պոնտական հույների նորաստեղծ ընտանիքներում հարգանք ու մեծ հեղինակություն էր վայելում, այն սրբություն էր: Անգամ երկու, ոչ ազգակից, տարբեր ընտանիքների մկրտության նույն քավորի ընտրության պարագայում, այդ ընտանիքները խնամիանալու իրավունք չունեին, դա դիտվում էր որպես սրբապղծություն, քանզի նրանք այդուհետ համարվում էին հոգևոր ազգակցությամբ կապված ընտանիքներ: Հոգևոր ազգակցական կապերով կապված ընտանիքներ էին համարվում նաև մկրտության նույն օրը, նույն ավազանում մկրտվածները, որոնք այդուհետ համարվում էին հոգևոր քույրեր ու եղբայրներ: Դրա համար էլ սովորության համաձայն հունական միջավայրին բնորոշ էր նաև աղջիկ երեխաներին կանանցից քավոր ընտրելը, իսկ տղա երեխաներին տղամարդկանցից ընտրելը[9]:

Պոնտոսի, ԱՊՀ-ի և Հայաստանում ապրող հույների քավորը տոհմական է եղել, քավորությունը փոխանցվել է սերնդեսերունդ, այն փոխելը գրեթե բացառվել է: Հունական հարսանիքում քավոր դառնում էր նա, ով փեսացուի կնքահայրն էր, ուստի մինչև սանիկի ամուսնանալը, քավորի մահացած կամ պանդխտության մեջ լինելու պարագայում նրան կարող էր փոխարինել որդիներից մեկը ըստ ավագության կարգի[10], երևույթ, որ նույնությամբ հանդիպում ենք նաև հայկական ավանդական ծիսական համալիրում[11]: Կնքահորը կարող էր փոխարինել միայն նրա արու զավակների տեր ազգակցը: Քավորի դեռևս չամուսնացած որդով փոխարինելու պարագայում քավորակնոջ պարտականությունները ընկնում էր մոր և քրոջ վրա, վերջինս մշտապես ուղեկցելու էր նորահարսին, պարացնելու էր քավորի նվերներով լեցուն «սինի»[12] - սկուտեղը, երևույթ, որն ուշ շրջանի երևույթներից է:

---

[9] Ελευθ. Η. Αλεξάκη, Τα γένη και η οικογένεια στην παραδοσιακή κοινωνία της Μάνης, Α Αθήνα, 1980, էջ 43:

[10] Γεωργιάδης Θανάσης, նշվ. աշխ., էջ 562:

[11] Ռ. Նահապետյան, Սղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթները ու ծեսերը, Երևան, 2007, էջ 140:

[12] Տե՛ս Մ. Ապրեսյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), 2009, Հում. հանր., Ալեքսանդրուպոլիս, տ. 2, էջ 5 - 7, Ξενοφωντα Κ. Ακογλού, նշվ. աշխ., էջ 52:

Ըստ մեր գրառած դաշտային ազգագրական նյութերի, տվյալ սովորույթը բնորոշ է նաև Հայաստանի հույներին: XXդ. 90-ական թվականների հայաստանաբնակ հույների Հայաստանից դեպի Հունաստան զանգվածային արտագաղթից հետո որոշ ավանդույթներ, այդ թվում նաև տոհմական քավորի պահպանման երևույթը խիստ փոփոխության է ենթարկվել: Այս առթիվ տրված հարցին ի պատասխան Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Յաղդան գյուղի նախկին բնակիչ, բայց այսօր Հունաստանի Ալեքսանդրուպոլիս քաղաքում ապրող Նիկոլայիդիս Յանկան (ծնված 1939թ.) հաղորդեց, որ ինքն ու իր եղբայրները Հայաստանում ապրած տարիներին ունեցել են իրենց տոհմական քավորը, բայց երբ եկան Հունաստան և իր տղային ամուսնացրին, որդին իրենց տոհմական քավորին փոխարինեց իր հունաստանցի հույն ընկերոջով[13]: Նույն երևույթի մասին է խոսում նաև Հանքավանի հույն, բայց Երևանում բնակվող Չախիրովա Ոոզան (ծնված 1937թ.), որի տղան ևս Հունաստանում հայուհու հետ ամուսնանալով իր կամքով փոխել է ընտանեկան քավորին[14]:

Ինչ վերաբերում է երկրորդ երևույթին նյութական արժեքների տեսքով «քավորի պատասխան» տալուն, որ բնորոշ է եղել հայկական ավանդույթային հետհարսանեկան արարողակարգին, ապա հունական ավանդույթի համաձայն այն այլ ընթացք ունի: Համաձայն հունալեզու մասնագիտական գրականության փեսացուի սափրման արարողության պահից, որին պարտադիր մասնակցություն ունի քավորը, մինչև բուն հարսանեկան ծեսի ընթացքում փեսային տրված դրամական տեսքով նվերները հանձնվում ու պահվում էին քավորի մոտ: Հարսանիքի ավարտից մեկ շաբաթ կամ ամենաշատը տաս օր անց քավորն իր տանը խնջույքի ծոխ պատրաստություն էր տեսնում և նորապսակներին հրավիրում իր տուն (τα παιδοστέφανα), որի ժամանակ էլ նրանց էր հանձնվում հավաքված և իր մոտ պահված ողջ գումարը[15]: Երևույթ, որ չի արձանագրվում հայաստանաբնակ հույների շրջանում ըստ երևույթին հայկական ավանդույթի ազդեցությամբ պայմանավորված: Այստեղի հունական միջավայրին բնորոշ է հարսանիքից հետո, որպես քավորի պատասխան, մի որոշակի պայմանավորված օր, նորապսակ զույգերի քավորի տուն գնալը և նրան իրենց շնորհակալությունը նվերի տեսքով հայտնելը[16]: Վերոհիշյալ երկու երևույթներն էլ Հունաստան վերաբնակված հույների շրջանում ներկայումս չեն պահպանվում:

---

[13] ԴԱՆ, տ. 1 (2009, Հուն. հանր., Սալոնիկ), էջ 3-5:
[14] ԴԱՆ, տեսաերիզ 2 (ՀՅ, Երևան):
[15] Ν. Λεταρτάρη, Το Νυφέτιχρον, Αθήνα, 1983, էջ 210:
[16] ԴԱՆ, տեսաերիզներ 3, 4, 5 (Հանքավան, Յաղդան, Ալավերդի, 2009 - 2010):

Դաշտային ազգագրական մեր գրառած նյութերի համաձայն ամենուրեք հունական ընտանիքի քավորը ավանդական և ժամանակակից հարսանիքում հանդիսացել է ողջ հարսանեկան համալիրի ղեկավարը, կարևոր դերակատարում է ունեցել և այժմ էլ մասնակի կերպով ունի նախահարսանեկան, բուն հարսանեկան և ետհարսանեկան արարողակարգում: Հարսանեկան ծիսակատարությունների ամբողջ ընթացքում քավորին վերապահված էր բացառիկ դեր նորապսակներին նախապատրաստել ամուսնական կյանքին հանուն արգասավոր սերնդաճի: Ավանդույթի համաձայն քավորությունը ժառանգական էր, նա եղել է ազդեցիկ անձ, որը վճռորոշ դեր է խաղացել նորապսակների նորաստեղծ ընտանիքում առողջ մթնոլորտ ստեղծելու, ամուր և ջերմ հարաբերություններ հաստատելու գործում: Ինչ խոսք, ժամանակի ընթացքում, տարբեր էթնիկ միջավայրերում ամուսնաընտանեկան ծիսական արարողակարգերում քավորի գբաղեցրած դերն ու գործառույթները ենթարկվել են էական փոփոխությունների կապված մի դեպքում էթնիկ տարբեր միջավայրերի առկայության և մյուս կողմից տարբեր սոցիալ- տնտեսական, քաղաքական և էթնոմշակութային տիրող համակարգերի: